



ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԻՆ

ԿԱՏԱՐԱԾ ԲԱՆԱԽԾՍՈՒԹԻՒՆԸ ԾԻՐԱՎԱԴՈՐԱԾ ԺՈՂՈՒՆ ԱՌՋԵՒ

ԱՐԳՈՑ ԵՂԱՐԱՔ

Թափուր Աթոռներու եպիսկոպոսներ անուանելէն առաջ, որու համար գլխաւորապէս այսօր զմեզ գումարած ենք, հաճոյ է Մեզ յայտնել ձեզի թէ ներկայապէս որոնք են Մեր խնամքը եւ հոգածութիւնը Արեւելքի քրիստոնէից նկատմամբ:

Արեւելեան Եկեղեցին միշտ առանձին խնամից առարկայ եղած է Հռովմայ Քա. հանայապետներուն, որոնք՝ քանի որ ընդհանուր Եկեղեցւոյ կառավարութեան մտադրած ժամանակ միանգամայն առանձին Եկեղեցիներու զարգացման ուշ կը դարձնեն, շատ իրաւացի եւ բնական էր որ իրենց մասնաւոր փոյթը կեդրոնացնէին Արեւելքի այն Եկեղեցւոյն վրայ, ուր փրկագործութեան սկզբնաւորութեան հետ՝ Առաքելութեան եւ մարտիրոսութեան առաջին ծաղիկները բողբոջեցան, սրբութեան եւ գիտութեան չքնաղ պատուներն ապա հասունցնելով: Եւ իրօք սքանչելի եղաւ այդ Եկեղեցւոյն փայլը միութեան երջանիկ օրերուն, երբ նա այս Առաքելական Աթոռին մեծաշուք Քա. հանայապետներ կ'ընծայէր, եւ երբ հանձարի, առաքինութեան եւ վարդապետութեան այդ մեծ յափտիրները, ինչպիսիք էին Բարսեղ, Ամսնաս, երկու Գրիգորներ եւ Ոսկերբան, այնքան փայլ կը ճառագայնէին բովանդակ քրիստոնէայ աշխարհի վրայ: Յիշելով այդ հին փառքերը, Մեր Նախորդները ոչ միայն պաշտպան կեցան պառնակութեան արեւելեան աւանդութեանց եւ սովորութեանց անջատ լաւ տիրականէն, այլ եւ մեծ պատիւ ընծայեցին անոնց հիմնադիր ծէսերուն, կարգադրելով որ պահուին անոնք ամբողջական իրենց անարատութեան մէջ, որպէս զի լաւ եւս ցայտէ Քրիստոսի Հարսին գեղեցկութիւնը չի հանդերձ ոսկեհուռս բոլորեալ փոփոխութեամբ»: Ծանօթ է մնաւաւնող թէ այդ արարողութիւնները, Առաքելական Աթոռոյ կարգադրութեամբ, կանոնաւորապէս կատարուեցան նոյն իսկ Հռովմայ մէջ, եւ

Թէ, մինչ հռովմէական տօնացուցին մէջ կ'անցնէին Արեւելքի սուրբ Քահանայապետները եւ վարդապետները, հռովմէական ծէսը կը զարդարուէր անոնց իմաստուն հառերով: Սակայն բազմաթիւ են քահանայապետական հոգածութեան վկայանքները ի նպաստ Արեւելեան Եկեղեցւոյ, տրուած՝ ըլլայ բարգաւաճեցնելու դիտմամբ զանազան տեսակ խնամատարութեամբ, ըլլայ պահպանելու եւ պաշտպանելու համար նոյն քրիստոնեայ հասարակութիւնը՝ մատնուած այնքան ստէպ թշնամի արշաւանքներու: Տեղոյս չէ թուարկել ջերմ եւ ստիպողական հրաւերները զորս Մեր Նախորդները ուղղած են անջատեալ Եկեղեցիներու որպէս զի օր առաջ դառնան միութեան եւ կեանքի կեդրոնին, ուսկից թշուառաբար հեռացած են, եւ վերստին սկսին յարգանքի եւ հպատակութեան աւանդութիւնները դէպ առ այս Առաքելական Աթոռը, որուն աչիւն շքեղ օրինակներ տուին յոյն Հայրերը Եփեսոսի եւ Քաղկեդոնի տիեզերական ժողովներուն մէջ:

Մենք եւս, հազիւ բարձրացած՝ Աստուծոյ ծածուկ խորհրդով՝ ի կառավարութիւն Հռովմէական այս Եկեղեցւոյ, *արմատ եւ մայր Կաթողիկէ Եկեղեցեաց*, դարձուցինք աչքերնիս եւ գեթոտ խնամչնիս Թէ՛ Առաքելական Աթոռիս հետ ցարդ միացեալ Արեւելեան Եկեղեցիներուն եւ Թէ՛ անկէ անջատ եղողներուն, եւ Մեր Նախորդներուն հետոց վրայ՝ առաջադրեցինք կոչել առաջնները իրենց նախկին փայլին, եւ առաջնորդել միւսները հաւատքի ըղծալի միութեան:

Այս կրկին նպատակներուն հասնելու համար, ամէն բանէ առաջ հիմնեցինք յատուկ Ժողով մը, սահմանուած մի միայն ի նպաստ Արեւելեան Եկեղեցեաց. եւ ապա բարձրագոյն ուսմանց վարժարանը մը ուր Թէ՛ լատինք եւ Թէ՛ արեւելեալք, նոյն իսկ անջատեալք, կարենան ստանալ ընդարձակ եւ խոր հմտութիւն մը բոլոր քրիստոնեայ Արեւելքի վրայ: Եւ արեւելեաց մեր բարեացակամութիւնը լաւ եւս ցոյց տալու համար, նոյն վարժարանը քահանայապետական տիտղոսով զարդարեցինք, մեր յատուկ պաշտպանութեան տակ առնելով, եւ Մեզ ու Մեր յաջորդներուն վերապաւ հելով այդ Ժողովին նախագահութիւնը:

Ոչ Թէ միայն Արեւելեան Եկեղեցւոյ ապագայ բարւոյն ինչամ տանիլ ջանացինք՝ զոր կը դիտէ ի մասնաւորի վարժարանը, այլ ցորչափ տեսեց ամաւոր պատերազմիս Մեր բոլոր Ժիր ջանքը ի գործ դրինք Թեթեւեցնելու անհնարին թշուառութիւնները որոնցմէ ընկճուած էին այն ազգերը որ կը բնակէին Ռուսիոյ, Պալքստիններու եւ Թուրքիոյ հողերուն վրայ: Որովհետեւ կը նշմարէինք տեղ մը՝ ամբողջ Ժողովուրդ մը ջարդուած գրեթէ բնաջինջ ըլլալու չափ, ուրիշ տեղ՝ դժբախտներու շարքեր լքանել իրենց տները եւ լեռներու վրայ ապաստանիլ՝ օդի անհարթութեանց եւ անօթութեան մատնուելով, այլուր՝ քրիստոնեայ հասարակութիւններ լուծուած, քահանայներ աքսորուած եւ բանտարկուած, եկեղեցիներ, վանքեր, դպրոցներ, հիւանդանոցներ օտար գործածութիւններու վերածուած, եկեղեցական եւ առանձնական ինչքերը վատնուած եւ ցրուած: Այս ամէն չարիքներուն ջանացինք դարման ընել որչափ որ կարելի եղաւ Մեզ առանց ո՞ր եւ է խտրութեան ազգի կամ կրօնքի: Հոգ տարինք ի մասնաւորի Հայոց եւ Սիւրիոյ ու Լիբանանու բնակիչներուն՝ որովհետեւ տեսանք Թէ՛ ամենէն շատ տառապեալներն էին անոնք տարագրութենէն, ենթարկուած սովի լկանքներուն եւ նոյն իսկ բազմութեամբ խողխողուած:

Այս պատճառաւ ի նպաստ Հայոց ընդհանրապէս եւ ի մասնաւորի անոնց որ կամ մահուան դատապարտուած էին կամ որ եւ իցէ կերպով Մեր օգնութեան կարօտ, անձամբ եւ կրկնակի դիմում ըրինք Օսմանեանց Կայսեր, կամ Թէ ինդիւրը ջերմ կերպով յանձնարարեցինք այդ ինքնակալներուն որ Մեզ կը թուէր Թէ վրան մեծ ազդեցութիւն ունէին: Այսու յաջողեցանք, աստուածային օգնութեամբ, արգելուլ յալ

եւ այլ տեղեր կոտորածները եւ բաւական կեանք ազատել: Ի գում շարժելով Հայաստանի բազմամիլիոն որբերուն վրայ, իրենց համար կոստանդնուպոլսոյ մէջ որբանոց մը բացինք: Իսկ Սիւրիոյ եւ Լիբանանու նկատմամբ, երկիւղալով զարհուրանքներէ փրկելու եւ այդ բնակիչները պարենաւորելու համար, զանազան տէրութեանց միջամտութիւնը եւ պաշտպանութիւնը փութացուցինք: Միով բանիւ Արեւելքի բոլոր թշուառներուն աշխատեցանք օգնել, բարոյական եւ նիւթական միջոցներով, այս բանիս մէջ Մեր Ներկայացուցիչներուն եռանդէն օգտուելով:

Եւ եթէ այժմ զինադադարին պատճառաւ կը լռէ պատերազմին շառաչը, սակայն չեն դադարիր Մեր եռանդնազոյն հոգածութիւնք Արեւելքի քրիստոնէից համար: Եւ իրօք իոն ամենէն ծանր քաղաքական խռովութիւնք եւ ազգութեանց բուռն կռիւները կը խափանեն ցարդ քաղաքական եւ կրօնական կեանքի կանոնաւոր ընթացքը, ի մասնաւորի Ռուսիոյ Պետութեան հպատակ ժողովրդոց մէջ, ուր հրատառականաւ պաշտամունքի ազատութիւնը զուարթ յոյսեր արթնցուցած էր լաւագոյն ապագայի մը: Իսկ Արեւելքի միւս մասանց մէջ, Մեր առջեւ պատկերող սգալի տեսարանը սա է. քարոզչութիւնք ցրուած, քրիստոնէութիւնը զուրկ եկեղեցիներէ եւ հովիւներէ, ժողովուրդներ որ քաղաքական շփոթներու մասնուած՝ կը կռուին իրաւունքէն՝ կեանքի ամենէն ծանր կարօտութիւններու մէջ:

Բայց այն որ բոլորովին յատուկ կերպով զՄեզ կը մտազբաղէ՝ Սուրբ Տեղեաց ապագայն է, եւ այս այն մասնաւոր վայելչութեան եւ կարեւորութեան պատճառաւ որոնց համար այնքան յարգուած են ամէն քրիստոնեայններէ: Եւ ո՞վ արդեօք կարող է կրկնել Մեր Նախորդներուն ըրած բոլոր ճիշդերը անհաւատներու տիրապետութենէն ազատելու համար զանոնք, եւ դարեւու շրջանին մէջ Արեւմուտքի քրիստոնէից դիւցազնական ձեռնարկները եւ թափած արիւնը: Եւ հիմակ որ, ի մեծ ցնւծութիւն բոլոր բարեաց, վերջապէս կրկին քրիստոնէից ձեռքը դարձան, սաստիկ է Մեր մտահոգութիւնը անոնց նկատմամբ քիչ ատենէն Փարիզու մէջ խաղաղութեան Համաժողովէն կատարուելիք որոշման վրայ. որովհետեւ ստուգելի Մեզի եւ բոլոր հաւատացեալ քրիստոնէից մեծ ցաւ պիտի ըլլար, եթէ ոչ հաւատացեալներ զան Պաղեստինու մէջ գտնալու առանձնաշնորհեալ եւ առաւելակշիռ դիրք մը, եւս աւելի եթէ քրիստոնէական կրօնքի այդ ամենասուրբ ուխտատեղիները յանձնուին ոչ քրիստոնէից:

Քիտենք դարձեալ թէ ոչ ուղղափառ օտարականներ, առատ միջոցներով առլցուն, օգտուելով պատերազմին պատճառաւ Պաղեստինու մէջ դիզուած աւերածներէ եւ մեծամեծ խեղճութիւններէն, իրենց միորոշութիւնները ցանկու հետամուտ են: Ինչպէս ցաւալի եւ լքուցիչ է խորհել թէ այնքան հոգիներ, կորսնցնելով հաւատքսին, դատապարտութեան վտանգին կ'ենթարկուին ճիշտ հոն՝ ուր Տէրն Մեր Յիսուս Քրիստոս իրենց շահեցաւ յաւիտեական կեանք՝ բոլոր իր արեան գնով: Զուրկ ամէն բանէ, այդ խեղճերը իրենց աղերսական բազուկները Մեզ կ'երկարեն, խնդրելով ոչ միայն ուտեստ եւ հագուստ, այլ եւ իրենց եկեղեցեաց վերստին շինութիւնը, դպրոցներուն բացումը, քարոզչութեանց վերհաստատութիւնը: Այս նպատակով, Մեր կողմանէ, Միւրք արդէն սահմանեցինք գումար մը, եւ յօժարակամ աւելին տալու տրաւ մադիր պիտի ըլլայինք, եթէ արգելք Մեզ չըլլային անձկութիւնք յորս կը գտնուի Սուրբ Անճուր: Ուստի դիտաւորութիւնս է յորդորել ուղղափառ աշխարհի բոլոր եպիսկոպոսները, որպէս զի այսպիսի ազնուական եւ սուրբ գործ մը ուշադրութեան առնեն, արծարծելով բոլոր հաւատացելոց մէջ գործունեայ սիրոյ այդ զգացումը՝ զոր նախնիք միշտ սնուցին առ Արեւելեան եղբարս:

Եւ վստահելով մեծապէս, որ անհրաժեշտն է, թէ պիտի չպակսի մեզ այս բանիս մէջ Աստուծոյ օգնութիւնը, կ'անցնինք Եպիսկոպոսաց զանազան անուանումներուն: